

ՂԵԿԱՎԱՐՎԵԼ ԳԻՏԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐՈՎ

Ս. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ՀԲ. Անտոյանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի
սեկտորի վարիչ, Բանասիրական գիտությունների դոկտոր

Հայոց լեզվի տերմինաշինության ու տերմինագործության հարցերը եղել են և զնալով ավելի են դառնում համընդհանուր հետաքրքրության առարկա՝ 'Իա, Իհարկե, ունի իր պատճառները՝ նախ, հայոց լեզվի բառապաշարը ներկա շրջանում հարստանում է, ամենից առաջ, ի հաշիվ տերմինների, և դա պայմանավորված է գիտության, տեխնիկայի, տնտեսության, մշակույթի տարբեր բնագավտոների բուռն զարգացումով։ Այս ամենի շնորհիվ լեզվի մեջ տրադորեն ու մեծ չափով առաջանում կամ մտնում են դիտական արժեք ունեցող նորանոր անվանումներ՝ տերմիններ։

Երկրորդ. տերմինները կարիք ունեն առավել միասնական ճանաչման, գնահատման ու գործածության, քան լեզվի բառապաշարի մյուս շերտը՝ ոչ տերմինային բառերը։ Բանն այն է, որ եթե ոչ տերմինային բառերի կազմության ու գործածության հարցում կա զգալի ազատություն, Իհարկե, հասկանալիության և լեզվական տվյալ միավորի ընձեռած իմաստային ամենալայն հնարավորության սահմաններում, այդպիսի բառերի բազմիմաստությունը ոչ միայն հնարավոր, այլև ցանկալի է լեզվի հարստության տեսակետից, ապա տերմինը, լինելով տվյալ առարկան կամ հերևյթը ճշգրտորեն անվանող գիտական արժեք ունեցող բառ, որպես այդպիսին, պետք է ճանաչվի բոլորի կողմից, այն, որպես կանոն, պետք է լինի մենիմաստ, նրա նկատմամբ ցանկալի չեն ձևային ու իմաստային տարբեր մոտեցումներ, գործածության տարբեր առումներ։

Երրորդ. ի տարբերություն ոչ տերմինային բառերի, որոնք կազմվում են, որպես կանոն, ինքնաբերաբար, առանց հատուկ միտումի (ինչպես՝ հորեղբայր, մորաքույր, հացթուխ), տերմիններն այժմ հիմնականում կազմվում են հատուկ նպատակադրությամբ, դրանք կազմելու կամ փոխ առնելու բոլոր հրահարվորությունների ու հանգամանքների հաշվառումով և առավել նպատակահարմար տարբերակի ընտրությամբ (ինչպես՝ ականանետ, ձայնասկավառակ, ինքնասպասարկում, դրամա-իրային)։

Այս հանգամանքները, որոնք մենք նշեցինք, որպես տերմինաշինության նկատմամբ մեծ հետաքրքրության և ակտիվ վերաբերմունքի պատճառներ, միաժամանակ հանգամանքներ են, որոնցից բխում է այդ գործի նկատմամբ մեծ պատասխանատվության ու գիտական մոտեցման անհրաժեշտությունը։

Առաճին դեպքերում, սակայն, նկատվում է, որ տերմինաշինության վերաբերյալ այս կամ այն կարծիքը հիմնված է ոչ թե հարցի գիտական ըմբռնման, այլ պարզապես անհատական ցանկության վրա։ Պետք է նկատի ունենալ, որ ներգործությունը լեզվի վրա կարող է տեսականորեն ընդունելի լինել և գործնականորեն իրագործվել այն դեպքում, եթե հիմնված է տվյալ լեզվի էություն, օրի-

նաշահությունների գիտական գնահատության վրա և բխում է վերջիններից: Այլապես միջամտությունը կարող է մերժվել տեսականորեն գիտության և գործնականորեն իր իսկ՝ լեզվի կողմից: Ըստ որում, նշենք, որ քննարկվող հարցում վճռական գերը, այսպես ասած, վերջին խոսքը պատկանում է իրեն՝ կենդանի լեզվին: Եվ եթե, օրինակ, նախահեղափոխական շրջանում անվանի բանաստեղծի պաշտպանած փեշ, պալտո բառերի փոխարեն գրական հայերենը վաղուց անվերապահորեն ունի վառաբան, վերաբերու բառերը, ապա գա պետք է բացատրել ոչ թե լեզվաբանների «մեղքով» (ինչպես կարծում են ոմանք), այլ իր իսկ լեզվի «կամքով», լեզվի զարգացման բնական ընթացքով: Որքան էլ մենք վիճենք այս կամ այն տերմինի ճիշտ կամ սխալ լինելու, ընդունելի կամ անընդունելի լինելու մասին, այնուամենայնիվ հարցի վերջնական ու գործնական լուծումը կասարում է լեզուն՝ ընդունելով կամ մերժելով այս կամ այն տերմինը, վերջինս այս կամ այն տարբերակ: Քանի որ այսպես է, ուրեմն գիտության նպատակը պետք է լինի առավելագույն չափով ճիշտ հաշվի առնել լեզվի զարգացման օրինաչափությունները, լեզվի պահանջները:

Ցավոք, այս բնական ու շատ կարևոր հանգամանքը հաշվի են առնում ոչ բոլորը, և դա էլ դառնում է հիմնական տարակարծությունների պատճառ: Այսպես, ոմանց դուր չի գալիս հայոց լեզվի բառակազմական հնարավորությունների օգտագործումը տերմինաշինության և առհասարակ բառակազմության մեջ: Եվ դա այն պատճառաբանությամբ, թե հայոց լեզուն չունի բառակազմական միջոցների հարստություն ու ճկունություն, որի մասին խոսում են մասնագետները, և երկրորդ, թե տերմինները բառեր չեն, ու այն, ինչ հատուկ է բառերին (կազմության տեսակետից), չի կարելի տարածել տերմինների վրա:

Հայոց լեզվի ու հայ լեզվաբանության համար պարզապես վերավորական կլինեի փաստերով ու փաստարկումներով նորից ապացուցել հայերենի բառակազմական հարստությունն ու ճկունությունը, մի բացարձակ ճշմարտություն, որ հայտնի է հայոց լեզվի ամեն մի գիտակի:

Ինչ վերաբերում է տերմինները բառեր չհամարելուն, ապա դրա մեջ այնքան ճշմարտություն կա, որքան «կաղնին ծառ չէ» դատողության մեջ:

«Տերմին» և «բառ» հասկացությունների՝ իրար բացառելու վերաբերյալ կարծիքը, գիտականորեն սխալ լինելով, միաժամանակ հանգեցնում է գործնական ու ճիշտ դիրքորոշման և լեզվի զարգացման արդի շրջանի յուրահատկությունների անտեսման: Դրանով անտեսվում է այն իրողությունը, որ գիտության ու տեխնիկայի բուռն զարգացման ու վերջինս նկատմամբ աճող համաժողովրդական հետաքրքրության ներկա պայմաններում հազարավոր տերմիններ այլևս չեն մնում գործածության նեղ ոլորտում, այլ կարճ ժամանակում մտնում են առօրին խոսքի մեջ, լեզվի համար ձեռք բերում սովորական բառի արժեք և իրենց գործածության հաճախականությամբ ու մատչելիությամբ մրցում ոչ տերմինային բառերի հետ (հմտ. էլեկտրական, օդանավ, շարժացան, տաքսի, տրոլեյբուս, արբանյակ, տիեզերագնաց, տիեզերանավ, հեռուստացույց և այլն):

Այնուհետև. հայոց լեզվի պատմական ու կառուցվածքային յուրահատկությունների անտեսումից է գալիս նաև այն կարծիքը, թե ժամանակակից հայերենի տերմինաշինության և առհասարակ բառակազմության մեջ չպետք

է ոչտադործել մեր լեզվի պատմական անցյալին հատուկ բառերն ու արմատները: Որքան էլ փորձեր կատարվեն այդպիսի բառերը «մեռած», «արխաիկ» որակումներով վարկաբեկելու համար, այնուամենայնիվ, եթե նման բառերի ու արմատների իմաստը այժմ հասկանալի է և եթե դրանց օգտագործումը որոշակի առավելություն ունի (սեղմություն, հասկանալիություն, հեշտությամբ նոր կաղմությունների մեջ մտնելը և այլն) համապատասխան հասկացությունն արտահայտելու համար հնարավոր այլ միջոցների համեմատությամբ, ապա դրանք օգտագործվում են և պետք է օգտագործվեն:

Բաղմաթիվ փաստերից բխենք միայն երկուսը՝ ակաճ և հեռուստ: Ռազմական МВНА տերմինը մենք ժամանակին արտահայտեցինք հին ակաճ բառով: Այս բառը ոչ միայն արագորեն տարածվեց, այլև, լինելով հայերեն, հեշտությամբ մտավ ածանցումների ու բառաբարդությունների մեջ՝ կաղմելով բաղմաթիվ այլ բառեր. ինչպես՝ ականադաշտ, ականադիր, ականազերծ, ականադերծել, ականակիր, ականահան, ականահավաք, ականանավ, ականանետ, ականապատ, ականապատել, ականափակոց և այլն:

Հեռուստ-ի մասին:

Վերջին տարիներին սովետական գիտության ու տեխնիկայի մի նոր ճյուղի առաջացման ու զարգացման շնորհիվ ստեղծվեցին նոր սարքեր, առաջացան դրանց հետ կապված նոր երևույթներ, որոնք անվանելու համար հայերենում կաղմվեցին տասնյակ բաղադրյալ բառեր հին ու «մեռած» հեռուստ բառի (որով դարեր շարունակ ոչ մի բառ չէր կաղմվել) և այլ բաղադրիչի միացմամբ. ինչպես՝ հեռուստացույց, հեռուստաաշտարակ, հեռուստադիտող, հեռուստաընկալիչ, հեռուստածրագիր, հեռուստակայան, հեռուստաշափ, հեռուստաշափիչ, հեռուստավարություն, հեռուստատեսային, հեռուստատեսություն, ռադիո-հեռուստաշափիչ և այլն:

Հապա այն ընկերները, որոնց կարծիքով Խելիզուր-ը, որպես տերմին պիտի մտներ հայոց լեզվի մեջ, և մենք չպիտի դիմեինք «մեռած» հեռուստ-ին ու թարգմանեինք այդ տերմինը, թող փորձեն վերոհիշյալ հասկանալի և մեկ բառով դրսևորված հասկացություններն արտահայտել իրենց ցանկացած եղանակով, բացառելով «հեռուստ»-ը: Հեշտությամբ կարելի է համոզվել, որ այդպիսի փորձի արդյունքը դրական լինել չի կարող և չի գոհացնի լեզվական ճաշակ ունեցող որևէ մեկին (հմտ. հեռուստաաշտարակ և տեխիզորի (կամ տեխիդիոն) աշտարակ, հեռուստադիտող և տեխիզոր դիտող, հեռուստածրագիր և տեխիզորի ծրագիր կամ տեխիդիոն հաղորդումների ծրագիր և այլն):

Սովետական Միության ազգային լեզուների զարգացման և նրանց փոխհարաբերությունների պրոբլեմի խոշորագույն մասնագետ Յու. Դ. Դեշերիևը, որը, ի դեպ, գլխավորում է այդ պրոբլեմի ուսումնասիրումը մեր Միության մեջ, որպես համապատասխան գիտական խորհրդի նախագահ, Ի. Ֆ. Պրոտչենկոյի հետ գրած «Развитие языков народов СССР в советскую эпоху» (Москва, 1968) արժեքավոր ուսումնասիրության մեջ պահանջում է տարբերակված մոտեցում ցուցաբերել տարբեր լեզուների զարգացման հարցերը քննելիս և հաշվի առնել ամեն մի լեզվի պատմական ավանդույթներն ու առանձնահատկությունները: «Ուսաց լեզուն,—ասված է նշված գրքում,— հայերենի, վրացերենի և ադրբեջաներենի վրա ազդում է ոչ միևնույն չափով: Ադրբեջաներենը ավելի շատ է կրում ուսաց լեզվի ազդեցությունը. առանձնապես մեծ դեր է կատարում ուսաց լեզուն տերմինաբանության մեջ: Հայերեն

ու վրացիներն գրական լեզուները լայնորեն հենվում են իրենց պատմականորեն ձևավորված ավանդույթների վրա և ավելի քիչ չափով են փոխառության կարիք զգում» (չջ 38):

Այդպիսին են հայոց լեզվի և նրա տերմինաբանության զարգացման վիճակը, հնարավորությունն ու յուրահատկությունը գիտական գնահատությամբ քննարկելու լեզու ամենից առաջ հենվում է իր վրա, իր ունեցածի, իր առանձնահատկությունների վրա և չի վերցնում այն, ինչ ինքն ունի և ինչի կարիքը չի զգում:

Հայոց լեզվի ու նրա տերմինաբանության զարգացման ու նորմավորման հարցերով զբաղվող ամեն ոք պետք է նկատի ունենա լեզվի զարգացման ու հարստացման նշված առողջ ու հասկանալի տրամաբանությունը և հենվի նրա վրա: Այդպես էլ սովորեցնում է մարքսիստական դիալեկտիկան. բնության ու հասարակական երևույթների վրա ազդելու, դրանք ըստ անհրաժեշտության փոփոխելու համար անհրաժեշտ է վեր հանել նրանց զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները և հենվել դրանց վրա:

Այս ամենը բնավ չի նշանակում, թե հայոց լեզուն տերմինաբանության հարցում սահմանափակվում է կամ պետք է սահմանափակվի միայն ներքին միջոցներով: Հայերենն այժմ դիմում է և պետք է դիմի փոխառությունների, երբ դրա կարիքը կա, երբ ներքին միջոցները պատշաճ կերպով չեն կարող բավարարել լեզվի պահանջը: Այնպես որ անտեղի են ուսանք փորձում տպավորություն ստեղծել, թե հայոց լեզուն իբր զարգանում է մաքրամոլության, իրենց տերմինով ասած՝ «պուրիզմի» սկզբունքով: Թերևս հնարավոր է վիճել առանձին օտար բառերի թերզմանության հաջողվածության կամ նույնիսկ անհրաժեշտության մասին (ըստ որում, կարող է խոսք լինել նաև որոշ օտար բառերի անտեղի գործածության մասին), բայց կասկածի տակ առնել մեր լեզվի զարգացման ու տերմինաբանության սկզբունքների ճշտությունը, և հայտարարել, թե այն մեկուսացվում է այլ լեզուներից, նշանակում է՝ փաստերը ճիշտ չտեսնել կամ ճիշտ չներկայացնել:

Նորագույն փոխառությունների ընդհանուր քանակի ու վիճակի, մեր լեզվական քաղաքականության ընդհանուր ուղղության մասին, անշուշտ որոշ գաղափար կարելի է կազմել նույնիսկ «Դպրոցական ուղղագրական բառարանի» փաստերի հիման վրա: Վերցնենք այդ բառարանի վերջին (1968 թ.) հրատարակության, ասենք, ռ-ով սկսվող բառերի ցանկը, որը կազմում է 250 էջանոց գրքի ընդամենը երկուսուկես էջը: Այսքան փոքր ծավալում դպրոցականին հանձնարարվող բառերի մեջ տեղ են գտել հետևյալ նորագույն փոխառությունները. ռադիատոր, ռադիացիա, ռադիոակտիվ, ռադիոլոկացիա, ռադիոկոմիտե, ռադիոտեխնիկա, ռադիոֆիկացիա, ռախիտ, ռայխստագ, ռացիոնալիզատոր, ռեակտիվ, ռեակտոր, ռեակցիա, ռեակցիոն, ռեզերվուար, ռեզոնանս, ռեզոնատոր, ռեժիմ, ռեժիսոր, ռելիեֆ, ռեկորդ, ռեկտոր, ռենեգատ, ռենտգեն, ռեպորտաժ, ռեպորտյոր, ռեֆերատ, ռեֆերենտ, ռեֆլեկտոր, ռեֆլեքս, ռեֆորմ, ռոմանս, ռոմանտիզմ, ռուբիդիում, ռեանշ, ռեանշիստ, ռեկվիզիտ և այլն:

Եթե նկատի ունենանք, որ նշված հատվածի ոչ բոլոր փոխառություններն ենք մենք մեջ բերել, այլև այն, որ դպրոցական բառարանից բնականաբար դուրս են մնում նեղ մասնագիտական փոխառյալ շատ տերմիններ (ինչպես՝ ռադիոզոնդ, ռադիոլա, ռադիոլոկատոր, ռադիոֆիզիկա, ռադիստ, ռաֆինադ,

ռեյն, ռեմարկ, ռենտա, ռեստորան, ռեմատիզմ, ռեոլվեր, ռոմ և այլն, և այլն), ապա պարզ կլինի, թե որքան մեծ թիվ են կազմում նորագույն փախառությունները մեր լեզվում, իսկ դա հաստատում է, որ մենք չենք կիրառում օտար տերմինները մեր լեզվում, մեր լեզուն օտար տերմիններից մաքրելու քաղաքականություն, որը կլինի սխալ, անմիտ և անիմաստ Այսպիսով, հայոց լեզվի տերմինարանությունը դարգանում է՝

1. ներքին միջոցներով.

ա) բառակազմությամբ (տիեզերանավ, օդանավակայան, ինքնաթիփ և այլն) .

բ) բառակազմակցությամբ (Միավորված ազգերի կազմակերպություն, ապառաղմականացված գոտի, հաշվողական կենտրոն և այլն) .

գ) հայերեն բառերի վերամասնավորումով և տերմինային նոր արժեքի հատկացումով (ական, արբանյակ, հրթիռ և այլն) .

դ) հապավումով (բուհ, սոցալ, ժողկրթբաժին և այլն) :

2. Արտաքին միջոցով՝ փոխառությամբ (չեմպիոն, ավտոբազա, ԴՕՍԱԱՖ և այլն) :

3. ներքին և արտաքին միջոցների միացումով (ավտոշարասյուն, կուսկոմիտե, ռադիոընդունիչ և այլն) :

Զի կարելի (բառիս թե՛ գիտականորեն անթույլատրելի և թե՛ գործնականորեն անկարելի լինելու իմաստներով) պահանջել՝ սահմանափակել տերմինաշինության ներքին ուղին և լեզուն զրկել իր իսկ ստեղծած և ունեցած հնարավորությունն ու միջոցները օգտագործելուց, ոչ էլ պայքարել առհասարակ օտար տերմինների փոխառության դեմ։ Տերմինաբանությունը, որ բառապաշարի բաղկացուցիչ մասն է, զարգանում է և պետք է զարգանա նրա հարցասացման ընդհանուր օրինաչափություններով՝ ներքին հնարավորությունների աղատ ու անկաշկանդ օգտագործումով և անհրաժեշտության դեպքում՝ դիմելով փոխառության։

Ըստ որում, սա անհատական կարծիք չէ, այլ մեր գիտական մտքի ընդհանուր դիրքորոշումը, մի առողջ տրամաբանություն, որ հիմնված է լեզվի զարգացման ներքին, բնական տրամաբանության վրա, վերջինիս գիտական արտահայտությունն է և պետականորեն ճանաչված ու հաստատված է ավելի քան երեք տասնամյակ առաջ՝ ՀՍՄԿ Մինիստրների սովետին առընթեր տերմինաբանական կոմիտեի կողմից։ Այդ որոշման մեջ ասված է.

1. «Թողոր այն դեպքերում, երբ հնարավոր է առանց տերմինի ռեալ իմաստի աղճատման կազմել նոր տերմիններ հայերենի բառակազմության մեթոդներով, չխուսափել այդպիսիները կազմելուց։

2. Առանց քաշվելու ընդունել և գործածել անհրաժեշտ միջազգային տերմինները, որոնց հայերեն համարժեքները չկան կամ չեն կարող կազմվել առանց իմաստի աղճատման»։

Մեկ հարց ևս։ Զիշտ չէր լինի տերմինաշինության պրոբլեմը սահմանափակել տերմինների ազգային կամ փոխառյալ լինելու հարցով։ Շատ կարևոր են նաև ազգային, ինչպես և օտար հնարավոր տարբերակների (եթե այդպիսիք կան կամ հնարավոր են) ընտրության հարցը և ճիշտ ընտրվածի միասնական գործածության ապահովումը։ Այս հարցի վրա մեզանում քիչ ուշադրություն է դարձվում, և առանձին դեպքերում չարաշահվում են հայերենի տերմինաստեղծական հնարավորությունները։ Այսպես, գերմանական ծագում ունեցող

«ցեխ» բառի փոխարեն այժմ հիմնավորապես մեր լեզվի մեջ է մտել արտադրամաս նորակազմ ու հաջող տերմինը: Սակայն վերջինս դժվարությամբ իր իրավունքները նվաճեց մեր լեզվում, որովհետև նրան խանգարում էին նրա հետ մրցության մեջ դրված այլ հայերեն բառեր՝ գործամաս, արտադրաբաժին. որոնք ոչ միայն դանդաղեցնում էին հայերեն մեկ տերմինի հաստատումը, այլև դրանով իսկ նպաստում էին ցեխ-ի գոյատևմանը: Նույնը պետք է ասել ձայնասկավառակ, ձայնապնակ, երգապնակ տարբերակների մասին: Սրանցից հաղթանակել է ձայնասկավառակ ձևը, որն ավելի ճիշտ է արտահայտում համապատասխան առարկայի ձևն ու կոթյունը, իսկ մյուս համարժեքները՝ դուրս մնացին, քանի որ նրանց մեջ անհաջող է պնակ բաղադրիչը, որի իմաստը մեզ համար ամենից առաջ կապվում է ուտելիքի որոշ ամանի հետ, և անհաջող է նաև երգ բաղադրիչը, որովհետև ձայնասկավառակի վրա ձայնագրվում են ոչ միայն երգեր, այլև գործիքային երաժշտություն, արտասանություն և այլն: Այս հանգամանքները ժամանակին հաշվի առնվելու դեպքում ավելի կհեշտացվեին ու կարագուցվեին ձայնասկավառակ տերմինի տարածումը ու կայունացումը:

Եթե հիշյալ տերմինները կազմվել են մոտավորապես նույն շրջանում և նրանց զուգահեռ գործածությունը այսպես թե այնպես հասկանալի է, թեև ոչ ցանկալի, ապա բոլորովին անհասկանալի է վաղուց տարածված և գրավոր ու բանավոր խոսքի մեջ արմատացած ճավափական (жбѡрѡныѡ) տերմինի դիմաց մեր թերթերում վերջերս երբեմն հանդիպող ընտրանի բառը: Այդպիսի նորարարությունների անհրաժեշտությունը լեզուն չի զգում. մեկ հասկացության համար լեզուն միայն մեկ տերմինի կարիք է զգում, և ավելի զուգահեռ ձևերը միայն կարող են իրար խանգարել ու բացասաբար անդրադառնալ մտքի միասնական, ճշգրիտ ու մատչելի հաղորդմանն ու ընկալմանը: Իսկ եթե ընտրանի-ն առաջ է քաշվում որպես համապատասխան իմաստն արտահայտելու համար ավելի հաջող ձև, ապա դա նույնպես գործնականորեն չի կարող արդարացվել, որովհետև ճավափական-ը իմաստային տեսակետից սխալ չէ և արդեն տարածված է:

Բերված օրինակներով մեր նպատակն էր ոչ թե հատկապես քննարկել մի քանի փաստեր, այլ դրանց միջոցով շեշտել նշված հարցի կարևորությունը և մեր մասնագետների ու հատկապես մամուլի աշխատողների ուշադրությունը հրավիրել այդ կարևոր հարցի վրա: Ինչպես երևում է, այս դեպքում ևս շատ կարևոր է հարցի նկատմամբ գիտական մոտեցումը. պետք է կարողանալ թե՛ ճիշտ գնահատել տվյալ տերմինի կամ տերմինային տարբերակի էությունը ձևային, իմաստային ու կիրառության առումով և թե՛ հաշվի առնել լեզվի սյահանջը տվյալ տեսակետից:

Այսպիսով, հայերենի տերմինաշինությունը հիմնականում զարգացել է և պետք է զարգանա գիտականորեն հիմնավորված սկզբունքներով, անհատական ճաշակի վրա միշտ պետք է իշխի գիտականությունը, որը պետք է հիմնված լինի լեզվական, այդ թվում բառակերտման և մասնավորապես տերմինաշինության օբյեկտիվ օրենքների ճանաչման ու հարգման վրա և բխի այդ օրենքներից: